

ՀԱՋՍՐԱՆ ԲԼԹՈՒԼ

ԵՐԿՐՈՐԳ ԱՐԱՐՈՒԱԾ

Առաջին պատկեր

Լեռներ, դաշտ և երեք ճանապարհ

Նրեւոյթ I

ՀՐԱՆՏ (Լեռներում)

Ամբողջ մէկ ամիս ես թափառեցի,
երկար շրջեցի, հարց ու փորձ արի—
Ոչ ոք չը գիտէ բլրուլի տեղը.
Եւ ես գիտէի, որ անօգուտ է
իմ որոնելը: Ես չեմ կարծում, որ
Աղպիսի թռչուն լինի աշխարհում:
Այն հով է գալիս... Օ', իմ հղբալը.
Սիրելի Պարէտ, եղբայր իմ Պարէտ,
չը, գտնար թէ ոչ:

ՊԱՐԷՏԻ ԶԱՅՆԸ Զըկալ, հնչ, չը կալ...

(Երևում է Պարէտը. երկու եղբայրները համբուրում են)

Նրեւոյթ II

ՀՐԱՆՏ ԵՒ ՊԱՐԷՏ

ՀՐԱՆՏ Արդէն ձանձրացալ ես թափառելուց:

ՊԱՐԷՏ Իսպառ լողնեցի, լուսահատուեցի.

Ամեն տեղ հարցրի—չըկալ ու չըկալ.

Իսկ է մեզ, եղբայր, ինչքան սանջուեցինք,
վերադառնանք տուն:

ՀՐԱՆՏ Տոն, բնչ երեսով.

Ուղում ես իսպառ խալտառանկ լինենք,

Մնանք ամօթով մեր հօր առաջին,

Որ աշխարհը մեզ ծաղրի, ծանակի:

ՊԱՐԷՏ Ի՞նչ պիտի անենք, ուրեմն լաւիտեան
Թափառենք ի զուր:

ՀՐԱՆՏ Այն, կարծում եմ.
Մենք սև երեսով չենք կարող գնալ
Մեր հօր պալատը. ալլ պիտի դարձեալ
Ընկնենք սար ու քար, որոնք ենք երկար,
Թէպէտ չեմ կարծում ցանկալին գտնենք,
Սակալն մենք դարձեալ պիտի որոնենք,
Որ լեռ չը մնանք կրտսեր եղբօրից:

ՊԱՐԷՏ Իսկ եթէ լանկարծ պատահենք դեւի,
Որը մեր գլխին մի փորձանք բերի.
Կամ թէ պատահենք անեղ վիշապի,
Որ ազահաբար լանկարծ լարձակուի
Ու մեղ կլանի:

ՀՐԱՆՏ Շատ էլ լաւ կ'անի,
Էլ թնչ պէտք ունինք երկար ապրելու:
Բայց, դարձեալ գնանք, շրջենք, որոնենք.
Իսկ թէ չը գտնենք. էլ տուն չենք դառնալ:
Կը գնանք հեռու մի օտար աշխարհ,
Ուր մէկտեղ կ'ապրենք, մէկտեղ կը մեռնենք:

ՊԱՐԷՏ Ա՛խ, մեր պարծենկոտ, անմիտ Սուրէնն էր
Մեր տարագրութեան միակ պատճառը:

ՀՐԱՆՏ Ի՞նչ պէտք էր արած. քանի որ անփորձ
Այն շողոքորթը մենակ կամեցաւ
Գլորաւել մեր հօր համակրութիւնը,
Վայելել նորա լարդանքն ու սէրը.
Իկնքան բազմութեան առաջ կամեցաւ
Յոյց տալ մեր հօրը անհեթեթ, անմիտ
Անձնուիրութիւն: Երբոր ալգպիսի
Մի ողորմելի, ալգպիսի գծում,
Վախկոտ մի մանուկ խոստում է անում
Ձեռնարկել մենակ մի կասկածելի,
Ու լանկաւալի, վտանգաւոր գործ—
Էլ չէինք կարող մենք տանը նստել:

ՊԱՐԷՏ Եթէ մնալինք մենք տանը նստած,
Լ Սուրէն ի զուր որոնելուց լեռ՝
Տուն վերադառնար ունալն ձեռներով...

ՀՐԱՆՏ Այդ միևնույն է, դարձեալ նա պիտի
Ժառանգէր մեր հօր, գահը բարձրանար:
ՊԱՐԷՏ Ի՛է, թնչ ես ասում, ալժմ թնչ անենք:

ՀՐԱՆՏ Ահա մեր առջև երեք ճանապարհ.
Արի, սիրելիս, ալտեղ, բաժանուենք:
Ապաւինելով մեր աստուածներին,
Իւրաքանչիւրս մի ուղի ընտրենք

Եւ շարունակենք մեր թափառելը.
Թէպէտ լուս չը կալ, սակալն ո՞վ գիտէ...
Դէ, մննս բարեաւ, սիրելի Պարէտ:
Ես կ'երթամ ուղիղ առաջին ճամբով:
Թէ ողջ ու առողջ մենք վերադառնանք,
Կ'աշխատենք դարձեալ հանդիպել իրար:

ՊԱՐԷՏ

Իսկ ես գնում եմ ալս երկրորդ ճամբով...
Բարձր ճանապարհ, իմ սիրելի Հրանտ:

(Նղբայրները համարութեամբ չեն տեսնում եւ իրանց ընտրած ճանապարհներով փոքր ինչ յետոյ մտնում է Սուրէնը):

Նրեւոյթ III

ՍՈՒՐԷՆ (մենակ)

Այո, մինչև արժամապարդիւն աճեցաւ
Իմ բոլոր ջանքը, բայց կարծես սիրտըս
Վրկալում է, որ զուր չէ անցնելու
Իմ թափառելը. անխառն, դադարի ոյժ
Կարծես անդադար առաջ է մղում
Ու ինձ մօտեցնում կէտ նպատակիս:
Ա՛խ, երանի էր թէ՛ իմանալի
Բլբուլի տեղը... Բայց ո՞վ է դալիս
Լեռան լանջերով հանդարտ քայլերով.
Գուցէ մոլորուած մի ճանապարհորդ,
Կամ բաղդախնդիր մի չար ստահակ...
Ով կուղէ լինի—ալստեղ կը սպասեմ ..
(Ներսւմ է Ոգին)

Նրեւոյթ IV

ՍՈՒՐԷՆ և ՈԳԻ

ՈԳԻ Ո՛վ դու, հողեղէն, ինչ ես բրնձում
Այս մերկ լեռներում:
ՍՈՒՐԷՆ Հաղարան-բլբուլ,
Որ տանեմ Մաննա արքայի համար:
ՈԳԻ Հաղարան-բլբուլ, ալո՛, լսել եմ:
ՍՈՒՐԷՆ Բարի ծերունի, ասան, խնդրում եմ՝
Որտեղ կարող եմ ես ալն ձեռք բերել:
ՈԳԻ Բայց դա չափազանց զժուարիւն գործ է:
ՍՈՒՐԷՆ Էհ, ես կը լաղթեմ ալդ զժուարութեան,
Միայն թէ աւան թռչունի տեղը:
ՈԳԻ Պիտի գնաս ալս երեք հակառակ

- ՏՈՒՐԷՆ Զանապարհներից մէկի ուղիւ թեամբ
 ՏՈՒՐԷՆ Զակառանկ... օրն է այս ուղիւների
 ՏՈՒՐԷՆ Տարբերութիւնը
- ՈԳԻ Ով որ առաջին
 Ուղիով գնալ, նա լետ կը դառնալ
 Ով որ այս երկրորդ ճամբովը գնալ—
 Կամ լետ կը դառնալ կամ լետ չի դառնալ
 Իսկ ով որ գնալ երրորդ ուղիով
 Էլ լետ չի դառնալ
- ՏՈՒՐԷՆ Բայց ինչ պատճառով
 ՈԳԻ Այն, որ այս երրորդ ճամբան է տանում
 Հաղարան-բլբուլ թռչունի վայրը
- ՏՈՒՐԷՆ Ինչպէս վարուեմ, որ գնամ ու լետ դամ
 ՈԳԻ Պէտք է մաքառես արգելքների դէմ
 Գէթ մինչև ակժմ, ով գնացել է
 Այս ճանապարհով, միշտ նա է լաղթուել,
 Կեանքիցը զրկուել, չքացել իսպառ
- ՏՈՒՐԷՆ Ես էլ պատրաստ եմ կեանքից զրկուելու
 Իմ ծերունազարդ հօր սիրուն համար
- ՈԳԻ Մեր աստուածները գուցէ քեզ պէս քաջ,
 Անձնուէր որդուն խղճան, խնայեն...
 Ուրեմն գնա երրորդ ուղիով,
 Գուցէ թէ բաղդը ժպտալ քեզ պէսին...
- ՏՈՒՐԷՆ Կարող ես արդեօք բաղդս գուշակել
 ՈԳԻ Կարծեմ թէ մասամբ ես գուշակեցի
 ՏՈՒՐԷՆ Ուրեմն գնամ ուղիղ այս ճամբով
 Որքան էլ լինի նա վտանգաւոր
 Հոգ չէ ինձ բնաւ... Բայց ինձ թուում է
 Բարի ծերունի, դու չաւ բան գիտես
 Չես կարող արդեօք տալ ինձ մի քանի
 Բարի խորհուրդներ
- ՈԳԻ Եթէ կատարես...
- ՏՈՒՐԷՆ Ես կը կատարեմ ամեն սրբութեամբ,
 Եւ բարութիւնը ես եմ մոռանալ
- ՈԳԻ Բարութիւնները միշտ մոռացում են
 Սակայն բարութիւն անողի համար
 Այդ միենուն է. իսկ բարիքները
 Չեն անում երբէք լիջուելու համար...
 Դէ, լսիր ասեմ, ով քաջ պատանի
 Երբ երկար գնաս ալդ ճանապարհով,
 Բեզ կը հանդիպի անաւոր մի գետ,
 Զուրը դառնալից, աղի ու զաղի,

Յճրդ, փրփրադէզ և սահանքաւոր,
 Եթէ կամենաս անփորձ անվտանգ
 Անցնել կատաղի ալդ գետի միջով—
 Խմիր ալն դառը, դարչելի ջրից
 Ու բացադանչիր. «Ա՛խ, որքան անուշ,
 Որքան բարեհամ ու սառնորակ ջուր»:
 Այո՛, կը խմեմ... կ'ասեմ. «ասն քեզ
 Անմահական ջուր»:

ՍՈՒՐԵՆ

ՈԳԻ

Ա՛յ, հէնց ալդպէս:

Երբ գետը կ'անցնես—կը տեսնես մի չոր,
 Փշալից անտառ, լի դադաններով,
 Թռնաւոր, անեղ ու սև օձերով,
 Եթէ կամենաս առանց փորձանքի
 Անցնել սոսկալի անտառի միջով
 Պիտի դու քաղես փշեր ու տատասկ
 Եւ հոտոտելով՝ ծաղիկ համարես,
 Ասես բարձրաձայն. «ի՛նչ հոտաւէտ է»:

ՍՈՒՐԵՆ

ՈԳԻ

Կը քաղեմ, ալո՛ և կ'ասեմ. «կարծես՝
 Թփից նոր կտրած անուշ վարդ լինի»:
 Եւ երբ անվրտանգ դուրս դաս անտառից—
 Կը տեսնես ծառից դու կապած մի ի ոխ,
 Իսկ մի ալլ ծառից կատաղի առիւծ.
 Առիւծի առաջ կը տեսնես դու խռա,
 Եւ խռի առաջ մի սլափաթ թարմ միս.
 Միսը կը վերցնես, առիւծին կը տաս,
 Խոտը կը դնես խռի առաջին,
 Ապա քո ուղին կը չարունակես:
 Երբ գնաս առաջ և քեզ հանդիպի
 Փառաւոր դարպաս, որի մէկ դուռը
 Կը լինի փակած, իսկ միւսը բացուած.
 Բացը կը փակես, փակը կը բանաս
 Ու ներս կը մտնես մի կանաչ անտառ:
 Կը տեսնես քնած մի չքնաղ փերի,
 Ու նորա հանդէպ ակնաղարդ վանդակ,
 Իրի մէջ երգում ու հաղար տեսակ
 Ձայներ է՝ հանում Հաղարան-բլուռ
 Թռչունը անդին: Նորա դիւթական,
 Անուշ-զեղքեղից ննջում է փերին
 Ամբողջ մի եօթնեակ, եօթն օրից լետով
 Ջարթնում է նորից...

(Որոտմունք. Ոգին անյալաւանում է: Ապշած Սուրենը գնում է
 երրորդ Հանապարհով.)

Երկրորդ պատկեր

Դարպաս, որի մէկ դուռը բաց է, միւսը փակ: Շքեղ ու փարթամ ծառատառն. գոյնզգոյն ծաղիկներ, շատրուան և աղբիւր: Փերին կիսամերկ քնած է. նորա հանդէպ ծառի ճիւղից կախուած է ոսկէ վանդակ, որի մէջ երգում է Հաղարան-բլբուլը:
(Դարպասից մտնում է Սուրէնը, փակ դուռը բանալով, իսկ բացը փակելով)

Երեսույթ I

Փերի և ՍՈՒՐԵՆ

ՍՈՒՐԵՆ (զմայլուած)

Երգիր, ձխ երգիր, աննման երգիչ,
Դու իմ ցանկալի Հաղարան-բլբուլ...
(Հաղարան-բլբուլը լսում է):

Ինչո՞ւ լռեցիր, Էր ընդհատեցիր
Այդ կախարդական անուշ դալլալը.
Գուցէ դարմացձր, որ այս կուսական
Անմերձենալի անտառի խորքը
Յանդգնեց մտնել մարդկային էակ...
Օ', շարունակիր քաղցրը մեղեդիդ.
Գուցէ չեմ ուզում դու արժանացնել
Ինձ անուշ երգի դեղ հնչիւններին
Ինձ նման գողին ու աւազակին:
Այո՛, եկել եմ քեզ գողանալու,
Սակայն ոչ բնաւ քեզ մեռա տալու:
Կը տանեմ ևս քեզ շքեղ, փառահեղ
Մեր արքայական մեծ ապարանքը,
Կը շրջապատեմ շուքով ու փալլով,
Միշտ կը փալփալեմ և կը գուրգուրեմ.
Կը սփռեմ ես քո առաջ մարգարիտ,
Յակինթ ու գոհար, ակունք անհամար.
Կը տամ ամեն օր անուշ վարդաջուր,
Ընտիր հատիկներ, համաղ կերակուր.
Դու կը զարդարես մեր ապարանքը,
Իսկ մենք կը գովենք քո գեղեղանքը.
Մարդիկ թող լսեն ձայնդ գեղանի,
Մաննա արքային թող տան երանի..
(Ցանկելով փերին)

Իրականութիւն, թէ սոսկ մի երանք..
Օ' դու աննման, չքնաղ դիցունհի,
Մանուշակների, նունուֆարների,
Վարդերի դու դարդ, հըմալիլ փերի...

Քանի որ կան քո արդշափ հրաշալի,
 Նախշուն ունքերը—ինչո՞ւ համար է
 Երկնակամարի գեղ ծիածանը.
 Եւ երբ որ ունիս դիւթական դէմքիդ
 Պարծառ շող ու փալ - ինչո՞ւ համար է
 Ոսկէ արեւը, արծաթ լուսինը.
 Քանի ժպտում են ծիրանի, նախշուն
 Քո շրթունքները—ինչո՞ւ են բացւում
 Հոտաւէտ վարդի ալ թերթիկները
 Թող իմ դողդոջուն արուող շրթունքը
 Թողնի անարատ, անքիծ երեսիդ.
 Մի փոքրիկ նշան, իբրեւ իմ սրտի,
 Անձկարեաց սրտի սիրող գրաւական...

(Ձգուլութեամբ համբուրում է փերիին)

Ոյինչ չիմացաւ... քնած է անուշ...
 Ծերունին ասաց, ամբողջ մի եօթնակ
 Քնում է փերին սոխակի անուշ
 Դալլալիկներից, եօթն օրից լետու
 Զարթնում է քնից... Սոխակը լուռ է,
 Գուցէ թէ լանկարծ զարթնի դիցուհին.
 Թերեւս ալօթ լրանում է արդէն
 Եօթներորդ օրը... լաւ է հեռանամ...

(Ձգուլութեամբ վերցնում է վանդակը և հիւս-
 ցած նայում փերիին.)

Բալց Բնչպէս թողնեմ ես ալս գեղահրաշ,
 Աննման կոլսին. ձրպէս մոռանամ
 Սորա հմալիչ, դիւթիչ պատկերը,
 Եւ առանց սորան էլ ինչիս է պէտք
 Աշխարհի կեանքը և բարիքները...
 Ոչ, ես կը մնամ, կը մնամ ալստեղ,
 Մինչև որ զարթնի սա անուշ քնից.
 Եւ երբ կը զարթնի, ծունկ կը խոնարհեմ
 Սորա երկնային գեղութեան առաջ
 Եւ լաց ու թացով ես կը համբուրեմ
 Քշանցքի ծալրը ու սէր կը հալցեմ...
 Բալց Բնչպէս մնամ, չէ որ խեղճ հալրս
 Աչքը միշտ ճամբին ըսպասում է ինձ,
 Սպասում է նաև անգին սոխակին.
 Բալց եթէ փերին զարթնի ու տեսնի,
 Յախշաակել են քաղցրախօս երգչին—
 Որչափ կը տխրի և կը վշտանալ...
 Գնամ թէ մնամ...

ՈԳՈՒ ԶԱՅՆԸ

Գնամ, ո՛վ Սուրէն:

ՍՈՒՐԷՆ (ապշած)

Իմ ծանօթ, բարի ծերունու ձայնը...

Սակարն ուր է նա...

ՈԳՈՒ ԶԱԾՆԸ

Գնա, ով Սուրեն:

ՍՈՒՐԵՆ Իսկ ինչպէս թողնեմ ալս չքնաղ կոխին:

ՈԳՈՒ ԶԱԾՆԸ Նա ինքը կըզալ սրտիդ տիրելու—

Սոխակն և վարդը անբաժան են միշտ:

Բաւ է, շտապիր: Զարթնում է փերին:

Քեզ ճանապարհին վտանգ է սպասում,

Բայց մի վախենար—

ՍՈՒՐԵՆ

Դէ մնաս բարեաւ:

(Վանդակը ձեռին հեռանում է շտապով)

Երեսույթ II

Փերի (զարթնելով)

Խօս երազները հանգիստ չըտունին:

Բոլոր ժամանակ ես տանջւում էի ..

Կարծես այնոր անեղ մի ծերուկ

ձգնում էր ջնջել, կործանել իսպառ

իմ անտառային իշխանութիւնը:

Կարծես՝ մի հզօր, քաջ երիտասարդ

Մտել էր այստեղ, իմ օթևանը՝

Եւ կամենում էր կուրծքս պատառել,

կուսական սիրտըս միջից դուրս կորզել

Եւ ես օղնութեան կանչեցի իմ քաջ

Ու հաւատարիմ պահապաններին,

Բայց ամենն ի զուր: Կարծես թէ ոչ ոք

էլ չէր կամենում հնազանդուելու ինձ:

Բոլորը կարծես՝ թողել էին ինձ

Ու դաւաճանել իրանց տիրուհուն...

Բայց թնչ բան է այս: Ղէմքս այրում է,

Եւ կարծես մէկը խարոյկ է վառել

Իմ ալտի վերայ... Գնամ, լուացուեմ

Սառնորակ ջրով ու քիչ զովանամ:

(Մօտենալով աղբւրին, եր պատկերը տեսնում է ջրի մէջ և սարսափում)

Ա՛խ, համբոյրի հեռք... Մարդկային այրուող

Շրթունքների հեռք: Ո՛ր մահկանացուն

Յանդգնեց մտնել իմ մենարանը

Ու թողնել արատ անարատ Ղէմքիս:

(Յանկարծ նկատում է, որ Հաղարան-բլբուլը չկա)

Անուշ բլբուլս, անգին սոխակս...

Անկարելի է, անկարելի է:

Ոչ, չեմ հաւատում ես իմ աչքերին:

Գուցէ քնած եմ—և դեռ տեսում է

Իմ սարսափելի, անեղ երազը...

Բայց ոչ տարեւ են... Յափշտակեւ են,
 Հազարան-բլթուլ, Հազարան-բլթուլ,
 Որտեղ ես, ձալն տուր, իմ անգին թռչուն.
 Մթթէ թռել ես, փախել ինձանից,
 Բայց չէիր կարող թողնել ինձ մենակ,
 Որովհետեւ դու սիրում էիր ինձ.
 Դու ամենալն օր ծղլում էիր
 Անուշիկ տաղով ինձ օրօր ասում,
 Օրհնում էիր մեր մտերմութիւնը,
 Անսահման սէրը, ընկերութիւնը.
 Կլկլոցներիդ ելէջներով
 Ու հաղար տեսակ գեղգեղանքներով
 Ջարդարում էիր կանաչ անտառը
 Եւ սքանչացնում բոլոր աշխարհը,
 Ոչ, չէիր կարող թողնել ինձ մենակ—
 Յափշտակեւ են, վաղակով տարեւ...
 Մակալն ուր էին պահապաններս.
 Բայց նախ անձ զարպասի փակած
 Դուռը բացել են, իսկ բացը փակել...
 Այս օվ թափանցեց գաղտնիքներին մէջ...
 (Կանգնում է դարպասի մօտ և բարձրաձայն կանչում)
 Ա՛յ, քաղցած առիւծ, բռնիր ալն գողին,
 Մուր ժանիքներով պատառիւր նորան,
 Լափիր, կշտացիր նորա գարշ մտով.
 Եթէ քնած ես, թող ձախի խողը
 Ու քեզ արթնագնիւ Օ՛, փշոտ անտառ,
 Փուշ ու տատախով ծակիր, լօշոտիր
 Այդ աւազակի զաղիր սարմինը.
 Ո՛վ դուք, կատաղի, վարագ գազաններ,
 Գիշատեցէք շուտ նորա մարմինը,
 Ներկեցէք հողը կարմիր արիւնով,
 Դուք, սարսափելի թուռաւոր օձեր,
 Խալթեցէք նորա բոլոր մարմինը,
 Ձեր դուռ թունով չքացրէք իսպառ.
 Եւ դուք, փրփրալից, կատաղած ջրեր,
 Խեղդեցէք նորան ձեր դուռը, աղի
 Յորձանքների մ.ջ և աղատեցէք
 Քաղցր բլթուլս... Բայց ձալն չէ լսում,
 Չեն հնազանդում իմ հրամաններին...
 Դաւաճանեւ են, դաւաճանեւ են
 Ամենքը, ալն, թողել ինձ մենակ...
 (Լալիս է)
 Երազս կարծես շուտով կատարուեց—
 Կուրծքս պատառում, ալրում է սաստիկ,
 Եւ սիրտըս կարծես ուզում է թռչել,
 Թռչել իմ կրծքից, սլանալ հեռու,

Դէպի արն քաջը, որ լափշտակել
Տարել է չքնաղ, անգին սոխակիս...
Այն, նա քաջ է, քաջ ու հնարագէտ.
Եթէ որ լինէր սովորական մարդ,
Կամ թէ հասարակ մի մահկանացու—
Նա չէր լանդգնիլ անցնել անաւոր
Ճանապարհները ու ոտքը դնել
Անմերձեանայի անտառիս միջին...
Համբուրել է ինձ... Նա ինձ սիրում է...
Այն, գնամ, գնամ, որոնեմ նորան...
Այն, գնում եմ... Իայց ճւր եմ գնում:
(Որոտմունք, երևում է Ոգին)

Երեսույթ III

Փերի և Ոգի

Ոգի Գնա, իմ փերի, ես քեզ կ'ուղեկցեմ:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Խնջուք Մաննայի պալատում.

Երեսույթ I

ՄԱՆՆԱ, ՀՐԱՆՏ և ՊԱՐԷՏ. ՈՒՐԱՐՏՈՒԻ, ՄՈՒՍԱՍԻՐԻ և
ՄԻԼԻՍԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐ. քրմեր, պալատականներ և
գուսաններ:

ՔՐՄԵՐ (երգելով)

Օ', Պարնիս. Հալդիան, Տիասպան,
Արքային երկար կեանք ու օր տաս.
Յարաժամ թող լինի նա լաղթող,
Որ սփռէ թշնամուն ահ ու դող,
Արամազդ, Անահիտ ու Նանէ,
Արքայի զաւակաց դու պահէ,
Որ նոքա միշտ լինեն քաջազօր,
Մեծ գործով թնդացնեն սար ու ձոր:

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐ

Ուրարտուի Հալոց մեծ պետութիւնը
Այսօր հրճուանքով մասնակցում է արև
Վեհ ու փառաւոր տօնախմբութեան,
Շնորհաւորում է Մաննա արքայի

Քաջ որդիների վերադառնալը,
Հաղարան-բառու սոխակի դալը:
ԳՈՒՍԱՆՆԵՐ (երգելով)

Կեցցէ արքան, կեցցէ լաւէտ,
Կեցցէ քաջ Հրանտ, կեցցէ Պարէտ.
Դէ, եղբայրներ, գինի ամէք,
Մեր քաջերին դուք օրհնեցէք,
Մեր քաջերը մահը տուին
Չար վիշապին ու չար դէին,
Մեր պալատի ջահը բերին,
Տուին Մաննա մեծ արքային:
Վարդը բերին, փուշը տուին,
Փուշը տուին, ղուշը բերին.
Ա՛յ, Հաղարան անգին դու ղուշ,
Գալըդ բարի, երգըդ անուշ:

ՄՈՒՍԱՍՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Շատ բաղդաւոր եմ զգում ինքս ինձ,
Որ Մուսասիրի պետութեան կողմից
Վիճակուեց երկու անգամ ւլցելել
Մեծազօր Մաննա արքայի հողը:
Առաջին անգամ, մի տարի առաջ
Եկել էի, որ մասնակից լինեմ
Այս նորակառուց պալատի առթիւ
Սարքուղ հանդիսին. բայց աստուածների
Տնօրինութիւնն ուրիշ կերպ եղաւ,
Եւ տխուր սրտով, սակայն բաղդաւոր,
Ես վերադարձաւ իմ հալընիւքը:
Մի տարուց լետու, այս երկրորդ անգամ
Արժանի եղաւ Մաննա արքայի
Հիւրասիրութեան: Շնորհաւորում եմ
Արքայի որդոց վերադառնալը,
Հաղուագիւտ երգիչ սոխակի գիւտը:

ՄԻԼԴԻՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ

Այսօր այս տանը՝ կալ երեք տեսակ
Տօնախմբութիւն: Առաջին տօնը
Անուանում եմ այն, որ այս պալատը
Էլ չի աւերուիլ նախկինների պէս,
Կը մնայ կանգուն շատ ու շատ դարեր,
Որովհետեւ էլ թերութիւն չունի.
Պակասութիւնը անգին սոխակն էր,
Որ ալժմ հաւ բերուեցաւ այստեղ:
Երկրորդն ալն է, որ քաջ Մաննայի
Քաջ որդիները այսօր ողջ, առողջ
Տուն վերադարձան, մխիթարեցին
Մերունի հօրը և անմահացրին
Իրանց անունը ամբողջ աշխարհում:

Երրորդը արն է, որ ըսքանչելի,
Աշխարհառչակ անդին բլբուլը
Ջարդարեց ալօր ալս շքեղ տունը
Եւ փառք ու պարծանք բերաւ ալս աշխարհ.
Ալօր հալւոյնեալ պետութիւնների
Շնորհաւորանքին, բարեմաղթութեան
Թո՛ղ միանան և նուաստիս բերնով
Միլդիս աշխարհի ջերմ կեցցէները:

ՔՐՄԵՐ (Երգելով)

Օ՛, Պարնիս, Հալդիան, Տիասպան,
Արքային երկար կեանք և օր տաս,
Արամազդ, Անահիտ ու Նանէ,
Արքայի զաւակաց դու պահէ:

ՄԱՆՆԱ

Շատ շնորհակալ եմ իմ արն թանկագին
Ազնիւ հիւրերից, որոնք մասնակից
Եղան ալօրուալ իմ ուրախութեան,
Թո՛ղ մեր ալօրուալ խինդ ու բերկրանքը
Լինի լաւիտեան մի առհաւատչեալ
Հալոց աշխարհի թագաւորների
Բարեկամութեան ու մտերմութեան.
Թող աստուածները օրհնեն մեր կապը,
Օրհնեն բոլորիս սուրբ միութիւնը:
Բայց պէտք է ասեմ, որ մեր ալօրուալ
Տօնախմբութիւնն աւելի շքեղ,
Աւելի փալլուն, աւելի ուրախ
Կը լինէր, եթէ չը բացակայէր
Իմ Սուրէն որդին. ո՛վ գիտէ հիմա
Ի՞նչ փորձանք եկաւ զաւակիս գլխին.
Արդեօք ո՞ղջ է նա, առո՞ղջ է որդիս,
Թէ որոնելով անդին սոխակին՝
Մատնել է անձը դառը տանջանքի.
Կամ թէ, մի գուցէ իջել է արդէն
Սառը գերեզման...

ՊԱԼԱՏԱԿԱՆ

Ողորմած արքայ,
Մի տխրիլ ալդպէս. մեծ է Արամազդ.
Նորա զօրութեամբ կը վերադառնալ
Մեր արքայօրդին:

ՔՈՒՐՄ

Բարեպաշտ արքայ,
Ես գուշակել եմ, որ Սուրէն որդիդ
Կը վերադառնալ, կը գալ հալոյնիք:

ՀՐԱՆՏ (առանձին)

Լաւ ես գուշակել:

ՊԱՐԷՏ (առանձին)

Լաւ է եթէ գալ:

ՀՐԱՆՏ

Հալրիկ, մի տխրիլ. եթէ Սուրէնը
Իմանալ, որ մենք արդէն գտել ենք

ՄԱՆՆԱ

Հաղարան-բլրուլ անուշ սոխակին—
 Կը վերադառնայ, կը գալ հալիքնիքի,
 Բացի դորանից, թանկագին հիւրեր,
 Պէտք է ձեզ ասեմ, որ մեր այսօրուայ
 Տօնախմբութիւնն աւելի շքեղ
 Կարող էր լինել, եթէ Հաղարան
 Անգին բլրուլը իր անուշ երգով
 Լրացնէր այսօր մեր խրախճանքը,
 Այս քանի՞ օր է, որ փալիսլուսմ ենք,
 Առաջը սփռում լակինթ ու գոհար,
 Լալ ու մարգարիտ, ընտիր հատիկներ,
 Եւ տալիս նորան համեղ կերակուր,
 Քաղցր վարդաշուր, սակալն չէ երգում:
 Օ՛, կ'երգէի, հալիկի, մի փոքր սպասիր.
 Դեռ չի սովորել, չի ընտելացել
 Իր այս նոր կեանքին և մեր աշխարհին:

ՀՐԱՆՏ

ՔՈՒՐՄ

ՄԱՆՆԱ

Ես դուշակել եմ, որ նա շատ շուտով
 Իր անուշ երգի քաղցր դալալով
 Պիտի թնդացնի մեր արքունիքը,
 Եւ ուրախացնի մեր թաղաւորին:
 Երնէկ այն ժամին... Դէ, ուրախացէ՛ք,
 Շարունակեցէ՛ք ձեր խնդութիւնը:
 Ճիշտ է, սակաւիկ թէպէտ տխրեցի,
 Բայց ոչ ինչ. անցաւ սրտիս թախիծը,
 Անուշիկ իմ Հրանտ, սիրելի Պարէտ,
 Չէ՛ք կամենալ հիւրերի առաջ
 Մէկ էլ պատմելու՝ թէ ինչպէս գտաք
 Անգին սոխակին. թող մեր հիւրերը
 Մանրամասնաբար լսեն բոլորը,
 Եթէ որ միայն ձանձրույթ չի լինիլ
 Ձեր պատմութիւնը...

ՀԻՒՐՆԵՐ

Ընդհակառակը.
 Ուրախ կ'լինենք, պատմեցէ՛ք, քաջեր.
 (Մտնում է սպասաւորը)

Երեսյոթ II

ՆՈՐԱՆՔ ԵՒ ՍՊԱՍԱԽՈՐ

ՍՊԱՍԱԽՈՐ

Մեծազոր արքայ, օտար աշխարհից

Նկել է ալստեղ ծերուկ բանաստեղծ՝

Երկար զգեստով, ճերմակ մօրուքով՝

Ցանկանում է, սէր, ներկայանալ քեզ.

ՄԱՆՆԱ

Խնդրիր, թող ներս գալ. ես միշտ սիրում եմ
 Բանաստեղծներին:

(Սպասաւորը դուրս է գնում. մի փոքր լետույ մտնում է բանաստեղծը):

Ներնայթ III

ՆՈՐԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Ծովի, ցամաքի

Վեհ ու մեծափառ, հղօր, ինքնակալ
 Մաննա արքային խոնարհ ողջմիտ
 Օտար աշխարհում բուռն հրճուանքով
 Լսեցի վեհիդ քաջ որդիներին
 Վերադառնալը և երգիչներին
 Քաղցրախօս երգիչ՝ բլբուլի գիւտը—
 Անցալ լեռները, խորխոր ձորերը
 Եւ լանդգնիցի գալ քո երկիրը
 Անարժան բերնով ձալնս միացնել
 Այսօրուալ տօնի խնդութեան ձալին,
 Ցանկալ Մաննային ալեշատութիւն,
 Յարատե օրեր ու երջանկութիւն:

ՄԱՆՆԱ

Շատ շնորհակալ եմ, սիրելի երգիչ,
 Իմ տան դռները միշտ բաց են եղել
 Սուրբ գեղարուեստի սպասաւորների
 Առաջ: Բայց ասան, ո՞վ ես և ուսմից:

ԲԱՆԱՍՏ.

Տէր, գեղարուեստը հայրենիք չունի:

ՄԱՆՆԱ.

Բայց էլի ասան, որտեղ ես ծնուել:

ԲԱՆԱՍՏ.

Ծնուել եմ ալետեղ, ուր որ խլիւում է
 Եւ թագաւորում ճշմարտութիւնը.
 Ուր ճշմարտութեան լուրը բանում է
 Մարդկային խաւար ու կոյր աչքերը.
 Ուր սերկանում ստոր կեղծիքը.
 Ուր արդարութեան ձալն է միշտ հնչում,
 Լրտեղ գեղեցկի վեհ զաղափարն է
 Ամեն ժամ տիրում...

ՄԱՆՆԱ

Է՛հ, շատ լաւ, շատ լաւ.

Ո՞վ էլ որ լինես—պատուական հիւր ես
 Պալատիս միջին: Դէ, ալթմ լսի՛ր
 Իմ որդիների պատմութիւնները...
 Գուցէ և նորանց քաջութիւնները
 Կը փառաբանես քո երգերի մէջ...
 Դէ, սկըսի՛ր, չլանտ. մենք քեզ լսում ենք.
 Նրբ մենք դուրս եկանք մեր հայրենիքից,
 Մի քանի ամիս տարագ'ր եղանք.

ՀՐԱՆՏ

Շատ թափուեցինք, ընկանք սար ու քար,
 Հարց ու փորձ արինք, բայց բոլորը զճւր:
 Եւ մի երեկոյ, երբ մի խոշ ձորում
 Լուռ նստած էինք ու հանգստանում—
 Տեսանք ալեւոր փորձուած մի հովիւ,

Նա իր հիւանդ հօր դարմանը ձեռին՝
Ուրախ մօտեցաւ իր եղբայրներին...»

ՀՐԱՆՏ (յուզում)

Հայր, բաւական է. խիստ շատ երկարեց
Ոտոնաւորը:

ՄԱՆՆԱ

Ո՛ն, ո՛ն, թո՛ղ ասի:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (շարունակելով)

«Բայց եղբայրների սրտում գուժ չը կար,
Նոցա սրտերը դարձել էր լեռ-քար.
Նոցա նախանձը և չարութիւնը
Մոռացնել տըւաւ իրանց արիւնը.
Մոռացան նոքա հարազատ եղբօր,
Մոռացան վիշտը ծերունի խեղճ հօր:
Եւ չը վախեցան ո՛չ աստուածներից,
Ո՛չ խղճի խալթից, ո՛չ դատաստանից.
Նախանձը, որպէս մի օձ թունաւոր,
Խալթում էր նոցա սիրտը նենգաւոր:
Եւ չը խղճացին անմեղ եղբօրը,
Բռնեցին, տարան, զցեցիւ հօրը...»

ՊԱՐԷՏ (յուզում)

Անկարելի է, անկարելի է:

ՀՐԱՆՏ

Բաւական է, հայր, հրամայիր, լռի...

ՄԱՆՆԱ

Ո՛ն, ո՛ն, ո՛ն. թողէք, որ շարունակի,
Այդ ինձ համար շատ հետաքրքիր է:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (շարունակելով)

«Եւ խորը հորից եղբայրը թշուառ
Ողբաձայն կանչեց, աղաչեց երկար,
Որ խղճան, փրկեն, աղատեն իրան—
Բայց եղբայրները ունկընդիր չեղան:
Հորի բերանը քարով ծածկեցին,
Սափորն առան և տուն դիմեցին:
Երբ եկան հօր մօտ, խաբեցին նորան,
Առաջին՝ մենք ենք ճարել քո դարման...
Եւ նենգ որդիքը դէմքով պարծենկոտ
Ջուրը մատուցին արքային ցաւոտ.
Երբ խմեց արքան ախ ջուրըն անգին,
Իսկոյն աղատուեց ցաւից դառնագին:
Եւ հօր արքան իր որդոց օրհնեց,
Իր ապարանքում մեծ հանդէս սարքեց:
Հիւրերի առաջ նենգ որդիները
Ոկսեցին պատմել շինծու վէպերը—
Թէ ինչպէս նոքա ոտնատակ տուին
Ահեղ վիշապին, ամենի դէին...
Եւ կեղծ ու պատիւ քաջութիւններից
Հրճում էր արքան սրտի խորքերից...»

ՀՐԱՆՏ (յուզուած)

Երբէք չի կարող ալդ բանը լինել.
Ալդ մի յօրինուած, սուտ պատմութիւն է...

ՊԱՐԷՏ (յուզուած)

Սուտ, կեղծ պատմութիւն, սոսկ զրպարտութիւն...

ՄԱՆՆԱ

Օ', մի խանդարէք, թող շարունակի:
Սիրելի երգիչ, արդեօք չե՞ս լիշում
Ալդ հիանալի բանահիւսութեան
Դու ալն հատուածը, որտեղ խօսւում է
Հօրի մէջ զցուած թշուառի մասին...
Ինչո՞վ վերջացաւ նորա վիճակը...
Արդեօք աղատուեց, նա արժանացաւ
Իր հօր տեսութեան... կեղծիքը բացուեց...

ՔԱՆԱՍՏԵՂՄ (շարունակելով)

Վերք սարի գլխին ժպտաց արևը,
Աշխարհին տուաւ վերջին բարեւ—
Ալն ջրհորի մօտ եկաւ մի ծառաւ,
Բարեպաշտ, գթոտ գիւղացի պառաւ:
Եւ լսեց լանկարծ հորի խորքերից
Հառաչանք ու լաց և ողբ դառնալից.
Բացաւ ջրհորի քարած բերանը,
Իջեցրեց ներքև ջրի պարանը.
Եւ աստուածներից նա ոյժ խնդրելով՝
Քաշեց, դուրս հանեց, ոսկրոտ ձեռներով,
Աղատեց թշուառ արքայի որդուն,
Որդեղրեց նորան ու տարաւ իր տուն:

ՄԱՆՆԱ (աբախ)

Ա՛խ, միթէ, միթէ աղատուեց հորից.
Փառք Արամազդին. . . Հետաքրքիր է,
Ընդ միշտ նա մնաց պառաւի տան մէջ,
Թէ լետու դնաց հալրական տունը.
Միթէ չը գիտէր, որ կարօտ հալրը
Սպասում էր կարօտ կորած դաւակին:

ՔԱՆԱՍՏԵՂՄ (շարունակելով)

«Եւ նա ապրում էր պառաւի տան մէջ,
Թիշուով իր հօրը, կարօտում անվերջ:
Եւ լսեց, որ իր հալրը ալևոր
Կազմել է հանդէս, խնջուք փառաւոր.
Արձակուրդ խնդրեց բարի պառաւից,
Հանապարհ ընկաւ, դուրս եկաւ գիւղից.
Հասաւ քաղաքը, բանաստեղծ դարձաւ,
Մտաւ արքունիք, հօր ներկայացաւ...»

ՄԱՆՆԱ (կտակածանքով)

Բանաստեղծ դարձաւ... Հօր ներկայացաւ...

ՀՐԱՆՏ (բարկացած)

Դու լաւ կ'անէիր՝ վերաւորական
Ոտանաւորըդ չարտասանէիր.
Եկեւ ես ալստեղ մեզ խնդացնելու,
Թէ անմեղ մարդկանց վերաւորելու:

ԲԱՆԱՍՏ. Եւ դու կարծում ես կեղծ է ասածըս:

ՊԱՐԷՏ (բարկացած)

Այո, կեղծ է, կեղծ, միանգամայն կեղծ.

ՀՐԱՆՏ Եթէ որ կեղծ չէ, ուր է քո փաստը:

ԲԱՆԱՍՏԵՂԾ (նետելով երեսի զիմակը և վերնադղեստը)

Ահա և փաստը...

(Ամենքը տեսնելով, որ բռնառտեղծի փոխարէն Սուրէնն է կանգնած իրանց առաջին՝ մնում են ապշած):

ՄԱՆՆԱ

Ա՛խ, Սուրէն, որդիս...

(Հայր և որդի զրկախառնում են)

Ուրեմն պատմած քո պատմութիւնը
ձշմարտութիւն է... Նենգ եղբայրներդ
Դաւածանե՛լ են, խլե՛լ բլբուլի՛ն,
Դցե՛լ քեզ հորը ու խաբե՛լ հորը...

(Ջալրացած)

Այլ ես չունեմ ես Հրանտ ու Պարէտ
Անունով որդիք... Մեռան ինձ համար...

Դու էլ Հրանտը չես, Դու Պարէտը չես.

Մանա աքքալի որդիքը բնաւ

Ձեզ նման չէին—նոքա անարժատ,

Անբիծ ու բարի զաւակներ էին.

Իսկ դուք— վատ, խարդախ, չար աւաղակներ,

Ստոր, դարչելի, նենգ չարազործներ...

Հիւրերիս առաջ խալտառակեցիք

Իմ ալիքները, իմ ծերութիւնը...

Թո՛ղ ալսուհետեւ մարդիկ նախատե՛ն,

Թե՛ն երեսիս, թե՛ անէծք թափեն

Ալեւոր գլխիս և իմ արեհիս,

Որ իմ արիւնից ծնունդ են առել

Ձեզ նման օձեր... Օ՛, երանի թէ

Ձեր մօր արգանդում չքանար իսպառ

Իր սաղմի միջին ձեր ժանտ ծնունդը...

Ես ձեզ կեանք տուի, ես ձեզ շունչ տուի,

Բայց դուք իմ կեանքը թունաւորեցիք,

Օրըս սեպրիք... Մահ, մահ, դահիճներ...

ՀՐԱՆՏ և ՊԱՐԷՏ (ծնկալոք)

Ա՛հ, ներքի մեզ, հայր...

ՍՈՒՐԷՆ

Հայր, ներքի նորանց.

ՄԱՆՆԱ (ղալրացած)

Իմ արքունիքում, իմ հողի միջին
Ձը պիտի երբէք լինի նենգութիւն.
Ամեն հարադործ, ամեն ստահակ՝
Լինի նա որդիս, լինի եղբայրս,
Լինի մի գինուոր կամ թէ մի գեղջուկ—
Պիտի արժանի պատիժը կըրի...
Թող աշխարհ տեսնի, որ իմ գեղեցիկ,
Շքեղ պալատում չը պէտք է լինի
Ժանտ աղեղութիւն...

ՔՈՒՐՄ

Բայց չէ որ, արքայ,
Մեծահոգութեան գեղեցկութիւնը
Կը նսեմացնի ամեն լանցաւոր
Մի աղեղութիւն:

ՄԱՆՆԱ

Անդրդուելի է...

ՍՈՒՐԷՆ

Հմլը, եղբայրներս, երբ ինձ գցեցին
Խորը հորի մէջ, որ ջնջեն իսպառ.
Կեանքս աշխարհից, գուցէ երջանիկ
Ջգացին իրանց. սակայն ես դժբաղդ
Կը զգամ ինքս ինձ, եթէ որ զրկուեմ
Իմ եղբայրներից... խնդրում եմ, ների՛ր...

ՄԱՆՆԱ

Անդրդուելի է...

ԱՄԵՆՔԸ

Ների՛ր... ողորմի՛ր...

ՄԱՆՆԱ

Անդրդուելի է իմ որոշումը...

(Որոտմունք. երեսմ է Ոգին)

Երևոյթ IV

ՆՈՐԱՆՔ ԵՒ ՈԳԻ

ՈԳԻ

Թող բարկութիւնըդ, մեծադօրէ՛Մաննա.
Որդիքըդ շուտով կը կրել պատիժ,
Կը կրեն պատիժ ոչ թէ քեզանից,
Այլ չըջապատող հանգամանքներից...
Շնորհաւորում եմ, երջանիկ արքայ,
Քո գեղեցկագեղ պալատի մէջ է
Աշխարհառչակ շագարան—բլբուլ
Անգին սոխակը: Շնորհաւորում եմ,
Երջանիկ Մաննա, քո հիանալի
Պալատի մէջ է աշխարհառչակ
Ու երանաւէտ, բաղդաւոր փեսան:
Շնորհաւորում եմ, երջանիկ Մաննա,

Քո տան մէջ է և աշխարհահռչակ
Անուշ վարդերի ու շուշանների
Չքնաղ թագուհին, գեղահրաշ փերին...

(Յայտնում է փերին. լսում է Հազարան-բլրուլի երգը. ամենքը
մնում են սպլած)։

Երեսյթ V

ՆՈՐԱՆՔ ԵՒ ՓԵՐԻ

ՈՂԻ

Դէ, երգիր, երգիր, քաղցրախօս երգիչ,
Հասաւ ելգելուդ դանկալի ժամը.
Օրհնիր քո երգով Մաննա արքային,
Օրհնիր քո չքնաղ թագուհու սէրը,
Ահա, թագուհի, անհման փէրի,
Ահա արն քաջը, Մաննա արքայի
Անվեհեր Սուրէն անձնազոհ որդին,
Որ լափշտակեց անգին բլուլիդ,
Որ լափշտակեց ու տիրեց սրտիդ,
Դու ինքդդ ալստեղ, բլրուլդ ալստեղ,
Սոխակդ ալստեղ, իսկ ես ամեն տեղ...
Բաղդաւոր փեսան համբուրեց կուսին
Ու սիրոյ նշան թողեց երեսին...

(Սուրէնն ու փերին գրկախառնում են)։

Դէ, օրհնիր, Մաննա, քո որդոց սէրը,
Նոցա սուրբ կապը և միութիւնը։

(Սուրէնն ու փերին չոքում են Մաննայի առաջ)։

ՄԱՆՆԱ

Թող աստուածները օրհնեն երկուսիդ,
Տան ուրախ օրեր և երջանկութիւն.
Թող ձեր սերունդը բաղմանալ, որպէս
Ծովի աւազը... Հանդիսակա՞ններ,
Ներկայացնում եմ ձեզ իմ պետութեան
Նոր թագաւորին և նոր թագուհուն...

ԱՄԵՆՔԸ

Կեցցէ, կեցցէ, կեցցէ...

ՄԱՆՆԱ

Սոխակը երգեց—զարույթն անցաւ,
Եւ ալս փառաւոր, երջանիկ ժամին
Ներում եմ ես ձեզ, ով Հրանտ ու Պարէտ.
Յանձնում եմ միայն ձեր խղճի խալթին,
Թող ձեր խիղճը լոկ լինի դատաւոր...
Սրբազան քրմեր, պատուական հիւրեր,
Պալատականներ, ղէ, գինի ածէք,
Խմենք ու խնդանք. և քառասուն օր,
Քառասուն գիշեր հարսանիք անենք։

Հնչեցրէ՛ք փողերն ու շեփորները,
Աղղարարեցէ՛ք արար աշխարհին
Մաննալի որդու հարսանեաց լուրը:
Թող գանձապետը իմ պանծարանից
Հանի անհամար ոսկի ու գոհար,
Տեղացնի բոլոր իմ ազգի գլխին,
Շաղ տալ ու սփռի ամբոխի առաջ,
Որ ամենեքեան խնդան ու ցնծան
Արքայի որդու մեծ հարսանիքին...

(Հնչում են շեփորները և փողերը):

ԱՄՆԵՔԸ Կեցցէ, Կեցցէ, Կեցցէ...

ՅԱՐ. ԹՈՒՄԱՆՆԱՆ

